


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYOS

(EGYPTE) LE CAIRE



ՊԵՏՄԱՆԻ

ՆԵՐՊՈՑՈՅ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Տարեկան գրանց 10

Բաժանուցի 3ԱԵԼՈՒՄ ԵՆԵՐԱ ՎՈՒՄԵՆԻ ԳՆԱՐԱՄԷ ԳԵՐԾ ԱՊՈՒ ԸԼԼԱՆ .

Ձի հրատարակումը ձեռագրերով ևս չի՛ն սրուիր :

ԱՂԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Թի՛ ԱՐՇԱԼՈՍՄԻ և թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ ՎԵՐԱՔԵՐԵԱՅ ԱՅՐԱԿԱՆ ԽԱԿՐՈՅ ԿԱՆԱՐ ԱՅՏԲ Ե ՊԻՆԷՅ ԽՐԱՊԱՐՈՒՄԵՆԱՆ ԽԱՍՏԻՆՈՎ ԲԵՐՔԻՍ ՄԱՍԱԽԱՐԱՐԻՆ , ՈՐ Է՛

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԵՐԹ

ՕՐԳԱՆ ԱՂԳԱՅԻՆ ԱՆՍԻ ՄԻՈՒՐԵԱՆ

ԳԵՐՔԻ ՓԹՈՒՄԵՆԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագրերը ուղղակի պատճառաւորապէս են իրենց գրածներու

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ԿՈՉ

ՈՒՂՂԵԱԼ ԳՈՇՆԱԿՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

(Շար . նախորդ թիւէն և վերջ)

Մենք արդարև աշատման չենք փափաքիր բայց եթէ ճիշտ է թէ Դաշնակցութեան Միութիւնը կրնար պահպանուիլ միայն այն գնով որ մենք բռնի սօցիալիստ դառնայինք, և տաճկահայ դործելակերպը այսպէս յեղաշրջուէր, ապա ուրեմն մենք չենք վարանիր յայտարարելու թէ այդ պարագային լուսագոյն էր որ անջատու մեզի ունենար, քանի որ տաճկահայ և կովկասահայ կեանքի պայմանները այդչափ խորապէս իրարմէ կը տարբերին եղբր : Մահմանները չեն թնջուիր յեղափոխական ներկայացուցիչներու հանդիսաւոր մէկ որոշումով կամ «Պըրօչակ» ի էջերուն մէջ պայտօնական յայտարարութեամբ մը, զձուձու ճոռոմ հատուածամուտութեան ամբարիշտ օգին չէ որ մեզի կը թելագրէ այս հաւատարմութեամբ . այլ ճշմարտութեան սէրը, կեանքի իրականութիւնը :

Արդարև եթէ ճիշտ է թէ կովկասի հասարակական կեանքը այնքան հասունացած է որ այդ տեղ նպատակայարմար կը դառնայ սօցիալիստական ուղղութեամբ դործունէութիւնը ապա ուրեմն սահմանները չեն շնջուած այլ ընդհակառակը աւելի ևս բաժնուած են իրարմէ . քանի որ տաճկահայ կեանքի դեռ նախնական և խիստ յետամնաց դրութեան մէջ սօցիալիստական ո՛ր է պահանջ տակաին ծնունդ աւած չէ այնտեղ . Միւս կողմէ եթէ երբէք ճիշտ է այն տարածայնութիւնը որի համաձայն իբր թէ սօցիալիզմը մի՛ միայն կովկասի պիտի վերապահուի և տաճկահայ դործունէութիւնը ըստ առաջնոյն պիտի շարունակուի ազգայնական հողի վրայ, ինչո՞ւ ուրեմն կը պահանջուի որ ամեն գաշնակցական ինքզինքը սօցիալիստ յայտարարէ, ինչո՞ւ Դաշնակցութիւնը ինքզինքը աշխատաւորներու կուսակցութիւն կ'անուանէ քանի որ իր գործունէութեան կարևորագոյն մասը կը կազմէ տաճկահայկական գործունէութիւնը : Եթէ կ'աւարկուի թէ սօցիալիզմը պէտք է ընդունինք օտար ցեղերու հետ համերայնութիւնը դիւրացնելու համար, այդ մասին

մենք կը պատասխանենք . այդ համերայնութեան գաղափարը, Դաշնակցութիւնը խիստ կանուխէն ընդունած էր և այդ ուղղութեամբ աշխատութիւններ անցնելին մէջ պակաս եղած չ'են : Սօցիալիզմը չէ որ առաջին անգամ պիտի մղէ մեզի այդպիսի համերայնութեան մը, երբ մեր գրայնի ազգերը այնչափ տղէտ են որ սօցիալիզմի վրայ ո՛ր է գաղափար չունին և անոր անունը անգամ անծանօթ է իրենց :

Գ. — Մենք ցաւելով կը տեսնենք վերջապէս Չ. Յ. Դաշնակցութեան 4րդ. Ընդհ. Ժողովը մերժած է Հինչակեան կեդրոնի առաջարկը ի մասին Հայ Յեղ. Կուսակցութեան քօնկրէի զոր ամեն պարագայի մէջ կ'արժէր փորձել . ըստ որում այդ քօնկրէին, յաճողութեան պարագային կարող էր յանդիլ հայ յեղափոխական կուսակցութիւնների միութեան կամ գէթ համերայն գործակցութեան, որու այնչափ սրտեւանդ կը փափաքէ ամբողջ Հայ ժողովուրդը : Յամենայն դէպս Հայ Յեղափոխական կուսակցութիւններու միութեան կամ համերայնութեան խնդիրը մեզ անհունապէս աւելի կը շահագրգռէ քան օտար տեղերու մէջ մեզ անծանօթ ենթադրեալ կազմակերպութիւններու հետ համերայնութիւնը : Մենք այստեղ ամեն քայլափոխի կը հանդիպինք Հինչակեան հատուածներու որոց հետ տեղւոյն վրայ համերայնութեամբ գործել անկարելի է, քանի որ գործելակերպի մասին անոնց և մեր պատասխանատու մարմիններու տուած հրահանգները ու պատուէրները աւելի կամ նուազ կը տարբերին իրարմէ : Այն ատեն միայն տեղւոյն վրայ համերայն գործունէութիւն կարելի կ'ըլլայ երբ արտասահմանի պիւրօները և կեդրոնները գործելակերպի մասին որոշ համաձայնութեան մը յանդամ ըլլան և որուն համեմատ հրահանգներ զրկեն երկրի ընկերներուն, և այս օգտակար արգելները ձեռք կը բերուի քօնկրէի :

Վերայիշեալ կէտերուն մէջ կը կայանան ահա մեր գիտողութիւնները 4րդ. Ընդհանուր Ժողովի կազմին և որոշումներուն վերաբերութեամբ և խորապէս կը ցաւինք որ զանցառելի և երկրորդական կէտեր չեն ասոնք, այլ էապէս ծանրակշիւ և ամենակենսական խնդիրներ : Այս հանգամանքներուն մէջ մեզի

անկարելի լինելով Չ. Յ. Դաշնակցութեան ներկայ փոփոխեալ ծրագրի և տարբերայն համաձայն գործել մեզի հետ կապուած ունենալով Հովտի, Խորշի, Հեղեղատի և Կարմիր — Լեռի ընկերներուն հաւանութիւնը այս խիստ կարևոր հարցերու վերաբերմամբ, մենք Լեռնավայրի ընկերներու պահելով հանդերձ մեր Դաշնակցական անունը և առանձին կազմակերպութիւնը կը մնանք բողոքող Ընդհանուր Ժողովի վերոյիշեալ որոշումներուն դէմ մեր այս վերապահ և սպասողական դիրքը կը պահենք մինչև յոռաշիկայ ճրգ. Ընդհանուր Ժողովը, որու գումարումը բարեբաղդաբար որոշուած է ո՛չ աւելի ուշ քան տարի մը (1908ի սկիզբը) և որպէսզի մեր վերև ուղիւ շահ հայեցակէտները լրջօրէն ներկայացուցանենք անունին և յարգուին, այժմէն մեր կողմէն լիազօր իրաւունքներ կուտանք մեր պատգամաւոր X. ի և ընկեր շ. ի, մինչև այդ ատեն մեր անունով կատարելու այն ամեն բանակցութիւնները և ձեռք առնելու այն ամեն միջոցները որոնք կը ձգտին մեզ հասցնել այդ նպատակին :

Ի դիմաց
Չ. Յ. Դ. Դաշնի վարիչ ընկերներու
ԿԱՄՄԱՐԱԿԱՆ
ՄԱՅԻԼ
ՍՏՈՄ
ՌՈՒՇՏԻ
ԹՈՎՄԱՍ
ԱՇՈՏ
ՄԱՐԹԻՆ
Հովտի Ընկերներու Լիազօր
ՇԱՀՈՒՆԵԱՆ
Դաշն 1 / 14 Դեկտեմբեր 1907

Ճանօթ . — Վերոգրեալը . Լեռնավայրի շրջանէն, Չ. Յ. Դ. Դաշնի վարիչ ընկերներու և Հովտի ընկերներու լիազօրի կողմանէ զրկուած է Մասնախմբիս, որ ընտրուած պատգամաւորներու հետ համախորհուրդ, հրատարակութեան կ'ուտայ գայն : Սոյն գրութեան մէկ օրինակը Արևմտեան Պիւրջի զրկուած է, վերոյիշեալ մարմիններու կողմանէ, որոնք մեզ կ'իմացնեն նաև թէ իրենց բոլոր յարաբերութիւնները խզած են Սօցիալիստ — Դաշնակցական մարմիններու հետ :
Երկրպագու Քոթրոյ Դաշնակցականներու
ՄԱՄՆԱԽՈՒՄԱ

ԽՈՍՏՈՎՆԱՆԻ ԵՒ ՉՂՂՈՒՄ

Գայրճեան Մասքեու, Աճեմեան Սարգիս, Տերտեան Դաւիթ, Ոսկերջեան Մովսէս և արօքն վարդապետաց :

Ս.Ռ.Ա.ՋԻ ՀԱՅԹ ԹՈՒՄՄԱՅԻ — ՏԵՍՈՒՉ ՌԷՄԷԻ ՎԱՆՈՒՑ :

Մեղաք Աստուծոյ, Հայր Սուրբ . Կայ Հինգ տարի մը, որ վանքը տակըն ու վրայ ըրինք, ներքին կառավարական վարչութիւնը յափշտակեցինք և ազգն ամբողջովին խաբեցինք՝ Մեղաք Աստուծոյ . — Ամենուս համոզումը սա էր, թէ մեր բռնապետութեան վարչական այս ձեռքերէք պիտի չ'կրնար դիմանալ մինչև վերջ, ու կամ կանուխ կամ Յարութիւն Պտերքը կ'մեծնի՝ և կամ ամեն ինչ հիմնական փոփոխութիւն մը պիտի կրէ, և այդ բարեփոխուած Սահմանադրական արդար վարչութեան մէջ մենք և ո՛չ մին պիտի կրնայ տեղ ունենալ՝ Մեղաք Աստուծոյ . — Ապա ուրեմն ապագային մեզ թերևս իբրև յետիմնի անգամ պիտի չ'գործածեն, քանի որ մենք ալ վստահ ենք թէ մեր այս կիրքով, զպղիբ շահագիտութեամբ, խելքով և մտաւոր կարողութեամբ թող թէ վարչութիւն, այլ պարզ աւելածութիւն մ'անգամ ընելու արժանիքէ զուրկ ենք . քանի որ ապագան մեզի շատ որոշ կերպէր, ալ մենք չ'էինք կրնար մտածել ոչ վանքին և ո՛չ ալ ժողովուրդին շահ՝ Մեղաք Աստուծոյ . — Մեր շահը և մեր ապագայ հանգրստաւետութիւնը ամենանուիրական էր մեզի համար ! պէտք է գրամ շահի, այս էր մեր նպատակը և նշանաբանը ! գրամի տէր ըլլալու հինգ տարիներու միջոցին ամօթը մեր երեսէն վար աւելք և բողոքովին լրկուի, անպատկառ և անխիղճ գործանք Մեղաք Աստուծոյ . — Գանի որ աչքերնիս ծակ վանոյնք ըլլալնիս գիտէինք և օրինաւոր միջոցով չ'էինք կրնար հարստանալ, ապօրէն միջոցները գործածեցինք՝ Մեղաք Աստուծոյ . — Պատրիարքին ձերութիւնը Օրմանեանին շահամուտութիւնը, հին Բէթիմը և մեր բռնարարած պաշտօնները կ'ներէին այդ մեր նախադասած զարհուրելի միջոցներուն՝ Մեղաք Աստուծոյ . — Անոր համար պաշտօնական զգեստի տակ ծպուած պաշտօնական գողութիւններու, յափշտակութիւններու, հարստահարութիւններու մասնութիւններու, կուսակցի

ճճրագործութեան, մանկամոլութեան և ամէն վատութիւններու շարք մը սկսանք բուռն կատարութեամբ և սղորակի նման արիւնք ծծեցինք Միւսարանութեան և անոր ձայնը խեղճեցինք՝ Մեղաք Աստուծոյ. - Կեղեքեցինք և տեղացի Հայ ժողովուրդը, զոր տեղ մատնեցինք, տուներնին կոխել տուինք, բանտարկեցինք, առիժները շահագործեցինք, ի հարկին ալ առիժ ստեղծեցինք՝ Մեղաք Աստուծոյ. - Ողջ թող մնայ միշտ Աւետիս ծառան կըսէինք՝ որուն երեսնէն, ո՛չ միայն երկու տարուան անխնայական և վերջի երեք տարուան մեր պաշտօնավարութեան միջոցին երկու երեք հազար ոսկւոյ գումարներ վաստակեցանք զատ զատ, այլ և բարձրացանք և պատուանշաններով չըբուեցանք՝ Մեղաք Աստուծոյ. - Մեր շահած գումարները հնգապատկեցէ՛ք, տանապատեցէ՛ք Հայր սուրբ, և այն ատեն կը համոզուիք թէ համբաւուր Աւետիս ծառան ի՞նչ վատարկած է ազօրինի միջոցներով և մեր ստեղծած ու յարուցած հաշուական կեղծ խնդրի պատրուակով - եւ վերջապէս մեր սարօքը դիւահարեալ՝ հաճոյք զգացինք Հայր սուրբ, մեր ձեռաց տակ ինչ որ կայ թախել և փախչիլ, առանց բնաւ մտածելու թէ, վանական արձանագրութեանց և Ազգպատմութեան մէջ Յէնիքիները գերազանցող վատ և սարսափ ու զրկուանք ազդող անխճալ անուններ պիտի թողունք՝ Մեղաք Աստուծոյ և կարգաւ Քահանայական իշխանութեամբը որ տուեալ է քեզ արձակեալ՝ ըլլմեզ կ'իտարայ մեզոց մերոյ ազալեմք զքեզ ! »

Իոստովանանայր - 2ի՛ք թողութիւն մեզոց ձեռոց, այլ հրամանաւն Աստուածային որ տուեալ է ինձ, երկաթեայ դաւազանաւ վանելով աշտաքսեմ՝ զձեզ ի սրբալան Տաճարէս և վճիռ արդար արձակեալ տամ հանել զձեզ զանհետեանսդ ի կախազան զի մի՛ գայթակղեցի հօտն մեր փոքրոցի և մահացու մեղք մի՛ վարակեցի Միաբանութիւն մեր Առաքելական Աթոռոյն Ա. Յա. կոյրեանց՝ ի բրուտադէմ. - Ամէն. - :

ՆԱՄՍԿ ՍՈՒՏԱՆԷՆ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՂՈՅ

Պատ. Խորագրութիւն «Արշալոյս» ի Գանձիք
Սուտան բնակող Հայերը, ի նկատի առնելով Հայաստանի սովորոց վերձուկը, պարտաճանաչութեան զղացումէն առաջնորդուած՝ ձեռնարկեցին հանդանակութեան մը, որմէ գոյոցաւ արգիւնք մը 140 (հարիւր քառասուն) Անգլ. ոսկւոյ, Սոյն գումարէն 100 Անգլ. ոսկին զրկուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր Փետրուար ամսոյ 11ին իսկ մնացեալ 40 ոսկին՝ ներկայիս 19ին Գրէտի Լիօնէ գրամատան Կ. Պոլսոյ Մասնաճիւղին ձեռամբ և
Ուրախ ենք արձանագրելու թէ վերոյիշեալ հանգանակութեան յօտարափոյթ մասնակցեցան Սուտանի զանազան քաղաքներուն մէջ ապրող բոլոր Հայերը հաւատարմաբար և նաեւ բարեւթ օտարազգիներ - Խարթուսէն եւ Օմուրը -

մանէն - իրենց բաժինը ունեցան մարդասիրական այս ձեռնարկին արգիւնաւորմանը մէջ :

Ընդ զորոյս կը խրկենք Ձեզ հանդանակութեան ցուցակը, խնդրելով հրատարակել զայն Ձեր Պատուական թերթին մէջ, եթէ կարելի է, ի վրաս հանձնել բարեխօսութեանը նպաստը հանձնելու ընդունիլ, Տիտրք, մեր կանխադրեալ շնորհակալեաց հաստատութիւնը :

Ի դիմաց Սուտանի Հայութեան Գ. ՃԹԵՐՃԵԱՆ

- S. S. Սեղարք ձօրճ, Խարթուս 500, Ասլանեան Եղարք Խարթուս 500
- Սուքիաս եւ Սիմօն Վանեան, 300, Փայլակ Տէրուհեան Խարթուս 500, Գէորգ Ճիւղեքեան Խարթուս 300, Կարապետ Փարազեան Խարթուս 100, Յակոբ Մարտիրոսեան Խարթուս 200, Քէչեան Եղարք Խարթուս 200, Յակոբ Մարգրեան Խարթուս 100, Արամ Պ. Յովհաննէսեան, 100, Պետրոս Գօրանեան, Հալիբեան 200, Երուանդ Աթանասեան, Խարթուս 100, Գրիգոր Կ. Գրիգորեան, 100, Սոյազեան, Օմուրեան 200, Սաիտ Հիւրմուզ, Օպէիտ (Գորտօֆան) 200, Ազազար Եղեանեան Օմուրեան 50, Բիւրքեան Եղարք Օմուրեան 1000, Լուղիկի Խանձեան Տուէմ 50, Յարութեան Խաչարէթեան 50, Բարեւէր Ոմն. Օմուրեան 400, Արաքեան Եղարք Օմուրեան 100, Ասատուր Գրիգորեան Օմուր. 40, ձօրճ Իշխանեան, Օմուրեան 300, Կիւրղէնի Խանձեան Օմուրեան 400, Լուսաւոր Խաչատուրեան, Փորթ Սուտան 50, Տիգրան Գապարեան, Քամիլի 100, Տիգրիկ Մարի Գապարեան Քամիլի 100, Գրիգոր Պօղոսեան Քամիլի 100, Լեւոն Լիմօնեան Քամիլի 100, Արթիւր Առաքելեան, Խարթուս 50, Յակոբ Յովհաննէան Խարթուս 100, Իսքէնդերեան Եղարք, Օմուրեան 60, Մուշեղ Գապրիւլեան Օմուրեան 97.5, Արթիւր Բիւրքեան Օմուրեան 100, Աւետիս Տէրաբեան Օմուրեան 50, Աշոտ Իգմիրլեան, Խարթուս 250, Պետրոս Բէլեան, Հալիբեան 10, Արմենակ Տէօլլեթեան, Գանձիք 20, Արիստակէս Ղազարեան, Ազէքսանգիր 100, Ն. Արգարեան, Խարթուս 50, Մարգրիտ Իգմիրլեան, Օպէիտ (Գորտօֆան) 300, Բարեւէր Ոմն, Օմուրեան 10, Շէյխ Ահմէտ Պաղատի Օմուր. 50, Ետուֆ Խաչատուր Օմուրեան 40, Ն. Ե. Ք. Քասնաւոր Օմուր. 40, Բարեւէր Ոմն, Օմուրեան 20, Ղազարեայ Գոթեան թիւն, Օմուր. 40, Տօքթօր Հաննա Օմուրեան 50, Էօմէր Էֆէնտի Յարի Օմուրեան 50, Ամէր Կրկիս Օմուրեան 30, Պարթը Կէլիտ Օմուր. 20, Սթալո Տիգրօ Երկիր Օմուրեան 100, Անիթօնիս Սասա Օմուրեան 100 է. Մայր Օմուր. 50, Սաիտ Մալուֆ Խարթուս 30, Էլի Մաշաճ Խարթուս 20 Պարթիս, Օմուրեան 20, Ա. Յիթօսիս եւ Թրակտրիս Օմուր. 50, Քօսթի ըՍթանուրի Օմուրեան 20, Փ. Տիմիթրուրեան եւ Որդի Օմուր. 100, Եանի Յուցուրիտիս Օմուրեան 100, ձօրճի պէյ Պաղատի Օմուր. 100, Շէյխ Իպրահիմ Աւէր Օմուրեան 100, Էլիաս Պէնու Օմուրեան 100, է. Տ. Քասթրօ Օմուրեան 100, ձօրճի Էյուպ Օմուրեան 30, Յարապա Պօթրոս Օմուրեան 50, Աթալա Կապրոս Օմուրեան 20, Ապտիւլ Հիւսէյին Հիւսիսի Օմուրեան 20 Հաննա Ավատ Օմուրեան 20,

Գումար զըշ. ողջ. 9107 50
Մնացեալը յաջորդով

ՄԻՆԵՄԱԹՕՎՐԱՔ ՎԵՆԻԻՍ
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԵՂ ԳԱՄԱՍԵԱՆ
Պուրագի նախախաւս զիմաց քրանկի զծին վրայ
ՆՈՐ ԲՐՕՎՐԱՄ

Ա. Գ. Ա. Տ. Ի. Ն

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Սաղիմայ Ամեն. Ս. Պատրիարք Ազգու հեռագրաւ մը անգամ մը ևս դիմած է Ազգային Վարչութեան որպէսզի փամ առաջ Երուսաղէմ զրկուի Գեր. Տէր Գէորգ Արքեպիսկոպոս Երեցեանը, որուն համար ինչպէս գիտենք՝ Միաբանութիւնը ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարքին որոշումներ տուած էր Փետր. ամսոյ վերջերը :

Ըստգեր կան թէ՛ Գեր. Երեցեան Սրբաղան Պօլիսէն բաժնուելով Երուսաղէմ գնալ չ'ուզեր եղեր. հիմնովին սիւալ է այս տարածայնութիւնը և մենք՝ զայդ հերքելու համար՝ բաւական կը համարինք Երուսաղէմէն նոր ստացուած նամակի մը մէկ քանի մասերը հոս զետեղելով : Անա թէ ի՞նչ կը գրէ այդ մասին մեր թղթակիցը՝ Մարտ 13/26 թուականաւ :

« Այսօր Գեր. Երեցեան Սրբաղանէ նամակ մը եկաւ, առ Ամեն. Վեհապետեան Պատրիարքն, որու մէջ կ'ըսէ Երեցեան Սրբաղան : »

« Ձեր բարձր Սրբաղութեան և ընդհանուր միաբան հօրց և եղբարց կողմէ զրկուած հեռագիրներն ու նամակները ախեռնայն շնորհակալութեամբ ստացած եմ և եւ այլ հնամակերպս եմ ու պատրաստ եմ գալ յօգուտ այդ ազգապարծանք հաստատութեան ցվերջ կենացս ծառայել ամենայն հաստատութեամբ ինչպէս ծառայած եմ 40 տարիներէ ի վեր. աւա՛ղ սը Ձեր և իմ փափաքանաց հանդէպ արգելքներ ու խոչնդոտներ կը յարուցանեն սմանք՝ մէկ քանիներու շարնապատկերուն զոհացում տուած ըլլալու համար : »

« Ձեմ գիտեր թէ ի՞նչ է յանցանքս և ինչո՞ւ ինձի ալ չեն ըսեր որ գոնէ ե՛ս ալ դիտումմ. Միւս կողմէ բուն յանցարները սրբացուած՝ աննոց ձեռքերը քարե՛ր կուտան որ վրաս ձգեն : »

« Ո՛հ, կո՛յր հակառակու թիւններ, զիս հալածելու ելած են և թող հալածեն. անմեղը երբ իր անմեղութեան վրայ վստահ է, իր սիրտը չի տրոփեր, փորձով և միութարուած կ'ըսեմ և քանի լաւ ըմբռնած թէ՛ աշխարհս հալածանաց հովիտն է. Մեմ Մարդը՝ Գերագոյն էակն ալ այդ բաժնս խոստովանած է « թէ՛ աշխարհ զձեզ հալածեց՝ զիտասլիք թէ՛ նախ զիս հալածից » բայց աւա՛ղ կ'ըսեմ ևս անոնց՝ որ օր մը արդարութեան զօրուար ձեռքը և խղճի ձայնը իրենց արիտուալ պիտի ստիպէ : Թո՛ղ զիս հալածեն չե՛մ՝ ցալիք. բայց կը թախանձեմ իբրև մարդ մահկանացու աննոց, որ յիշեն մահ և դատատանը, յիշեն միլիոնաւոր հայերու ազգին պարծանք եղած Երուսաղէմը, հայ վանքին պատիւը որ տուած էրու դահալէթին դադար չհասած է : »

« Բարձրացնորճ Սրբաղան հայր և Տէր, կը գրէ Գեր. Երեցեան Սրբաղան. Գողթնացի Վահան Ամիրապետին բանութեան շղթաներովը կաշխանուած էր և կ'զձար երթալ տեսնել իր ցանկալի հայրենիքին աւերածը . . . չեմ յուսար թէ Ամիրաներու բանութեան դարը ըլլայ մեր դարն ալ և չեմ յուսար թէ ազգը մինչև վերջը խաբուած պիտի մնայ անոնցմէ՛ որ խաբեալութիւնը փառք կը սեպեն և չեն ուզեր սղանիլ ըլլալ : »

« Աստուած Ձեր բարձր Սրբաղութեան երկար և երջանիկ թանկալին կեանք պարգևէ և միաբան եղբարց և հարց հօգի խաղաղութեան և սիրոյ, իսկ հայ ազգն մեր երջանիկ և խաղաղ պահէ : »

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ
Հակառակ որ անբարեկամ և փախստական միաբանները իրենց ճամբուն վրայ հանդիպած զանազան տեղեր աղոթող թեւադրանքներ և արածայնութիւններ ըրած են Երուսաղէմը վարկաբեկելու և անոր հատկութի ազրիւնները խափանելու համար, և աւելի ամօթալին, ուխտաւորներու թեւադրած են որ կըբուրու աղմուկ յարուցանեն, սակայն՝ մեր ստացած նամակներէն կը տեղեկանանք թէ՛ այդ վերջին աղոթող փորձն ալ ապարկու անցած է և այս տարուան ուխտաւորները աւելի հանդիստ և խաղաղ ուխտ ըրած են : Եգիպտոսէն ալ բաւական թըւումով ուխտաւորներ կը գտնուին եւ զեր, և հետզհետէ նոր գացողներ ալ կան :

ԽՅՈՒՆ ԶԻՄԷՆՆԱՆ

Խաբէութեան - մանաւանդ հիւմայ - օրկանին մէջ կը կարգանք : « Բժեշտող Զիմէնեանի ազատութեան համար մինչև հիմայ եղած ջանքերը արդիւնքի մը յանգած չ'ըլլալով : Ս. Առաջնորդ Հայրը Երաթ Օր այս ինքորոյ առիժի տեսակցութիւն մը ունեցաւ նախարարապետ Վսեմ. Պոթրոս բաշա Ղալիի հետ, որ խօստացաւ այս մասին կարելին ի գործ դնել : »

Իեղճ նշան Զիմէնեանի մասին եղած զրոյցներուն արտաքին եւրեւելի վերոյիշեալն է : Այդ խաբէարար տողերը կարգացողները նախանաբար պիտի համոզուին թէ իրականութեան մը վրայ խօսուած է - Ոչ սակայն. այդ տողերը մեզի կ'ստիպեն որիչ ստուգութիւններ հրապարակ դնելով դիմակալերը բանել այդ խնդրոյն շուրջ թեւածող կեղծուոր և ազատ ու յօշանդի բարեգործները !!! :

Իեղճ նշան Զիմէնեանի մասին կը կարծուի թէ շանքեր կը ըլլան ազատելու : Մենք ալ կ'ստորագրենք այդպիսի դիմում մը՝ ու արդէն նախ մենք եղած ենք առաջարկողք : Մեր Գեր. Առաջնորդը սակայն՝ չենք զիտեր թէ ի՞նչպէս և իրեն խղճմտանքը որո՞նք ծախած է, որ թոյլ կուտայ՝ որպէսզի իր անունը յեղեղուի խնդրոյ մը մէջ, որուն շուրջ յօշանդորդներն են որ կը սլքտան :

Իիչ մը բացատրենք գոնէ : Ասկէ առաջ « Լուսարեւ Արեւ » Ազգափրարար (?) բաներ մը հրատարակեց Զիմէնեանի մասին. պէտք է՛կայ օրովը թուականովը յիշատակելու : Ձեռնհաս մարմինը՝ եթէ պէտք ունենայ, կրնայ փնտռել ու դտնել յիշեալ թիւը կամ թիւերը : Գիթ իբրոս պարան մը, որ իր բոլոր շարլաթանութիւններովը ծանոյն է, կը ներկայանայ « իեղճ

Նշան Զիմենանի » եղբորը սրճա- գործ Պ. Սահակին, և քանի մը ու- կի կուղէ իր եղբորը ազատութեան գործածուելու համար . . . :

Եօթը ոսկի կը բրջնէ առաջին անգամ . . . չ'մտնանք ըսել թէ այդ պարոնն ալ հայ փաստաբանի մը ո- ղորմէջի գործակիցներէն մին է :

Յետոյ սրպէս թէ շարժումներ կ'ըլլան, և բանտերու Ընդհ. Տեսուչ Գուրգենի գրաստանէն մը ընելու համար երկու անգլիներէն հմուտ անգլիներ ալ կը գտնուին ծանօթ . . . լուսանկարիչի մը մի- ջոցաւ . . . (խեղճ Նշան . . . քու երկաթէ շղթաներդ ալ կը շահագործ- ծեն . տեսա՞ր . . .)

Աղջիկները կերթան կուգան, ինչպէս ո՛ր և է մէկը պիտի երթար ու գար : Վերջէն այդ ծրագրին հեղինակ չարագելի գրագէտ փաս- տաբանը նոր գրամի պէտք կ'ունեն- նայ :

Հայտէ՛ Սահակին . . . : Խեղճ Նշանին գծարդը եղբայ- րը Սահակ, եղած գիմուսին ինչ կընէ ինչ չընէր կը տրամադրէ վեց ոսկի ևս՝ պարսֆով, որպէսզի եղ- բայրը (խեղճ Նշանը) ազատի : Եթէ ազատի ազէկ . բայց ՏՕՂԱՏՐԱԽԱՆ- ԲՈՒՆ ինչ ըսենք . . . :

Փարաները կուտայ 13 ոսկի, և որովհետեւ պատրաստ խնայողու- թիւն մը չունի, «յարգելի գրա- գէտին» անուղղակի միջոցներով ա- ռած ոսկիները վճարելու, գծարդը երիտասարդին սրտին վրայ կը ծան- րանայ փոխառութիւնը, ու կը հի- ւանդանայ . . . :

Երկու օր առաջ էր : Խմբագ- րութեան անգամներէն մին կը հանդիպի իրեն «Տխուր Ժպտիտ» հե- ղինակ Տ. Գեորգ Մ. Պէրպէրեանի հետ :

— Սահակ (կը հարցնէ մտերմօրէն) ինչ էս եղբեր, ինչպէ՞ս նիհարցեր ես . . .

— Հիւանդ էի : Խնչ պիտի ըլ- լայ . այս տարի վնասեցի . եկան ըսին որ եղբայրդ պիտի ազատենք 7 ոսկի մէկ և 6 ոսկի ալ մէկ ա- ռին . պարտքերս չ'կըցայ վճարել մտածուէնքներս դիս պաշարեցին ու հիւանդացայ :

— Ի՞նչ էր փարս ուզողը . . .

— Փաստաբանին մարդը

— Հա՛ . սա՛, գիտե՛մ . գիտե՛մ . . . :

— Գործին մէջը աղջիկ ալ խօ- թեցին . . . ֆոթօկրաֆէն լեռնաւ աղջիկները . . . : Բայց չեմ գիտեր թէ ուրիշ տեղերէ ալ այս անունով ստակ շորթ եցին . . . :

— Այո՛ . աղջիկները Ըհիմիկիսք են ու կարգ մը ուրիշ բաներ ալ . . .

— Է՛հ փաստաբանը ինչ ըրաւ :

— Ըսին թէ Առաջնորդը նախա- րարապէս Պութրոս բաշա Ղալիին հետ պիտի տեսակցի . . . :

Խեղճ Նշան . աւելի խեղճ Սա- հակ . եղբորդ թշուառութիւնը շա- հագործող ցաւազար հրէշներ ալ կան եղբեր, սրտնք մեր մեղացը իրա-ւաբան ալ են : Մե՛ղք . ամօ՛թ . . . :

Անգլիները և գոնէ սրիկա- յութիւն է սա, և աշխարհի վրայ ոչ մէկ նախարարապետ թոյլ պիտի տայ այս տեսակ խարէութեանց, եթէ նոյն իսկ մեր Գեր . Առաջնորդն ալ այցելէ . . . :

Ալ բաւական է . . . : Պէտք է դիտնալ որ այս գէպըրը այդ կար- գի շահատուութեանց գեռ ամենէն աննշան նմոյշներէն մէկն է . . . :

ԵՌՈՎԱՊՈՒՆ

Խաւարակոտ զիշերուան մեջ որքա՞ն խաղաղ՝ Ննջեր մեր ծովապան .- ինչպէս այի՛ք ծովու . Սրագեր նա՛ կը հիւսեր ինքնիշխան թե՛ վայր՝ Կրկին քանաք քրքրուն քեռերն հովու :

Մեղմիկ վեկիւտ մեր ընդ մեր փայտիս ճակտե՛ն՝ Ծովուն սարսուռէն քերէր քափանցեր պայծառ, Վիայ եր միայն անփոփոխած շաւրարի մասե՛ն՝ Կանթեղ մը՝ որ քրքար՝ կարծես մար ու վառ :

Հուրիկ Աճիւնէն քափքիս ժողովն եր ձեռնակ՝ Հիւշեկներու պէս քար ուրուրէր գուարք, Երիտասարդ սեւ հերց ցակցովս՝ կրակ եր կրակ՝ Բնութեան ծոցէն քիչսած « Կոյսն եր » Եռարդ :

Այցուն ուշ քերէր ծովու սասանող վեկիւտ՝ Երագստե ծովապանէն քարսիս խիտն զեր ուսին՝ Գտա ծանրէն ձիւնի պէս որ փայլէր քափիւտ, Երագ չէր այլ եւս, հապա՛ աչեաց հոգիւն գային առ Կոյսին . Ա. Մ. ՀԱՅՍԹԵԱՆ

18 Մարտ 1909 Ի Գանձիտ

ԱՐԵՂ ՅՈՅՑ ՍԸ

Մե՛նք այնչափ կը կեղծեմք ուրիշներուն առջեւ . որ վերջ ի վերջոյ կ'սխալեմք մեր առջեւն ալ կեղծել :

(Լ. Ա. ԱՌԵՆՑՈՒԳՕ)

Մամուլի ազատութեան գէտ՝ հաստատել ուզուած սեղմիչ օրէնք- ները անհղ ցոյցերու տեղի կուտան : Այնպէս կերեայ յի է նոր նախարար- րութեան որոշումները, պիտի ստի- պեն եզրկատարները հայկապ զայ- ցերով զգաղիլ . ինչպէս սահմանա- գրութեան հուշակման հետ ծնունդ- առաւ ան թուրքերոյ Մայրաքաղա- քին մէջ ալ : Հոն սրդարեւ պահ մը մոռնալ ուղեցին գործ, աշխատանք, նոյն իսկ օրուան հացը, ծափահա- րութիւններով զբաղելու համար, որուն հետեւանք սակայն շատ փայ- լուն և ոսկեղծ չեքուր

Կարգը եզրկատարներուն է հի- մայ բան, գործ, դպրոցական զբա- ղումներ և ամէն ինչ թողլով ցոյցե- րով ժամանակ անցնելու համար :

Անցեալ օրեր, երբ Մամուլ օ- ընէրին գործադրութեան խօսքը եղած էր միայն, մեծ ու պզտիկ գրաչարները, Մեքենավարները և Տպարանական ամէն գտնու աշխա- տաւորներ, որոնք Մամուլէն պիտի կրնան հողալ իրենց օրսպահիլը, ա- հագին աղբուկ յարուցին քաղաքին մէջ և նոյն իսկ Ապտիսի հրապարակը հաւաքուելով, քաղաք մայրուց իրենց ապրուստի միջոցները ուղեցին նա- խարարներէն և ն. Բ. Խալվէն : Իրենց պահանջը անբանաւոր նկատե- լու պատճառ մը չունինք, որով- հետեւ « Մամուլի սեղմիչ օրէնքը » գործադրուելով, ապագական գոր- ծոց մէջ աշխատող հազարէ աւելի գործաւորներ առանց գործի և ա- ռանց ապրուստի կրնան մնալ, ինչ որ նուազ չ'աղբեր եզրկատարի սնուն- սական արգի անմախանձելի կացու- թեանը վրայ :

Երեկ չէ առջի օրուան - հինգ- շարթի - ցոյցը սակայն, նմանօրինակ ցոյցերու ամենէն անհղաստը և վտանգաւորը եղաւ, Օրէրայի հը- րապարակէն սկսելով :

Այս անգամ ցուցարարները ար- պագրիներ և Մամուլի աշխատաւոր- ներ չէին . այլ՝ ուսանողներ և տե- ղացիներ թուով 20 հազարէ աւելի, այնպէս որ Խալվական Օրէրայի հը- րապարակը անհղ գոյցելու տեղ մնա- ցած չէր մինչև Գամելի և Ապտիսի պրոտստները անգամ :

Ցուցարարները « Կեցցէ՛ ազա- տութիւնը . անկցի՛ բռնակալութիւ- նը և Մամուլը սեղմիչ օրէնքը . Կեցցէ՛ Անպիւսն . Երկիր՝ ուր աւեն տեսակ ազատութիւն կայ . » կը պո-

ւային անգագար : Աստիկանութիւնը ամեն միջոց ձեռք առած էր պատահական վը- տանգները հեռացնելու համար :

Հոն էր ոստիկանութեան հը- րամանատար Վեճմ . Հարիէյ բաշա, ինչպէս նաև Կառավարիչ Վեճմ . Իպ- րահիմ բաշա Նէկիլ . հեծեալ և հե- տեակ ոստիկաններու բաւական թիւ- մ՝ ալ պատրաստ էր բարեկարգու- թեան հսկելու համար, եթէ իրա- պէս ցայցերու առեն քաղաքագործի- կարելի է փնտռել կատաղած ամբո- խին մէջ :

Հակառակ ի գործ դրուած ա- շալուրջ հսկողութեան, ցուցարար- ները բաւական կտորելու, թափե- լու, աթոռաւարտի և ապակիներ կտորելու անխարժութիւններ պատ- ճուեցին :

Քանի մը վիրաւորեալներ և ձերբակալութիւններ տեղի ունեցան կատարի աթոռամարտի մը երեսէն, ու եթէ քիչ մ'ալ հրէջնեցու խում- քը ուշանալ պաղ տու մը տալու համար հազարեակներով ցուցարար- ներուն, հաւանական է որ ցոյցը շատ մեծ համեմատութիւններ առ- նէր, և իրաւի լրագոյն պատիժն է տաք գլուխներու տրուած պաղ տուրը որ մեր ճարտար փոխնիցեն- րոյ մեծ յաջողութեամբ ի գործ դրին, որ ուր ուրեմն ցուցարարնե- րը զոյալացած՝ նոր ուժ անելու հա- մար լայն պողոտաներուն մէջ տա- րածուեցան իրենց « անկցի՛ները և կեցցէ՛ ներքը » գոռալու համար աւե- լի անհղ և շատ աւելի որոտընդոտ : Ալ չենք կարծեր որ « Մամուլը սեղմիչ » օրէնքի վրայ մտածող Մի- նիսթներ պիտի գտնուին եզրկատարի մէջ, բաց ի

ՍԱՐԳՍԻ

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ն. Վ. ՍԵՐ ԵՏԸՆ ԿՈՐՍԹ Սեր Էլտըն Կորսթ եւ իր Գոյրը Երկուշաբթի օրը Պէյրութ հասած են, ուր ընդունուած են Անզլ . Հիւպատո- սին կողմէ :

Ն. Վանուսթիւն Անզլ . Լիագոր Երկուշաբթի օրը առաջիկայ Երկուշաբ- թի Գահիրէ պիտի հասնի :

ՅՈՒՑԱՐԱՐՆԵՐԷՆ Չորեքշաբթի երեկոյան ցուցա- րարներէն Մօհամմէտ էֆ . Մուխթար՝ աշակերտ Գեղարուեստական վարժարա- նին և Ապպա էֆ . Հիլմի՛ աշակերտ թեվֆիգիյէ վարժարանին . ոստիկա- նութեան զիմարած ըլլալուն համար ձերբակալուած են :

Հինգշաբթի առաւօտ երկուքն ալ գատուելով Մէրթէզի գոտարանին տա- ջուէ մին 15 և միւսը 20 օրուան բանտարկութեան դատապարտուած են :

սակայն անոնց փաստաբանը 800 դր . երաշխադրամ (cautionnement) յանձնե- լով առժամանակեայ կերպով ազատած է իր յաճախորդները :

ՆԵՌԱԳԻՐ

Կ. Պոլիս 2 Ապրիլ .- Երբորը Քէօզիի Չուպուեքու և Ալպանացիներու զորագունդերը ճամբու պիտի դրուին և անոնց անց պիտի բերուին Անատոլիի զորախումբերէն :

Կ. Պոլիս 2 Ապրիլ .- Շէրիֆ բա- շա հրաժարեցաւ Միւսթիւն և Յառաջ- դիմութիւն գօմիթէի անդամակցութե- նէն, որուն գոյութիւնը ինք վտանգ կը համարի Օսմանեան Հայրենիքին :

ՏՐՈՒՄ ԳՈՒՅ

« Ծիւղի ԺՊԻՏՅ » գրքոյկէն սակա-ւաթիւ օրինակներ միայն մնացած են : Անոնք որ իրենց զրկուած չ'ըլ- նելուն համար ցաւ կը յայտնեն կամ պիտի յայտնեն, ներողափառ զգացու- մով վերաբերուելով թող գիմեն Պապ- էլ-խալք Կառավարչատան գիմաց Պէր- պէրեան Եղբարց վճարատուներ և զը- նեն մնացած օրինակներէն :

Իսկ անոնք որ գրքոյկէն ստացած և սակաւին վճարած չ'են, թող բարե- հաճին փութացնել գրքոյկին փոխար- ժէքը Ազն . Սեդրաք էֆ . Իւսեթեանի . ի Տայրէ Տիգրան բաշա :

Գրքոյկին վճարման հատկիք ճշգրտելով . Հ. Բ. Ը. Միւսթեան Վը- սեմ . Նախագահ Պողոս բաշայի պիտի յանձնուի, Պոլսոյ Պատրիարքարանի Առ- վելոց Եանձնախումբին զրկուելու հա- մար :

ԵՐԿՐՈՒԳ ԶԱՆԿ

Տ. Տ. Գրիգոր էֆ. Սարաֆեան 200, Տօրթ . և Տիկին Սուճեան 50, Մկրտիչ Պալգեան 40, Փաստափան Մէթու Պրուսալի 40, Ստեփան Յով- հաննէսեան 40, Արմենակ Պալգեան 30, Աշոտ բրուտեան 20, Ներսէս Վարդանեան 20, Արթին Իսթիւճե- եան 20, Արթին Իսթիւճեան 20, Յովհաննէս Չարացպալեան 20, Գէ- որդ Նահապետեան 20, Թովմաս Բրուտեան 20, Գրիգոր Մէթէրիսեան 20, Խաչիկ Քէօզեան 20, Եղբարք Թաթոսեան 20, Օ. Տիգրատուր 20, Արմենակ Քէրէսթեճեան 20, Ար- մենակ Մալուճեան 20, Պետրոս Յովսէփեան 20, Եղբարք Սարբեան 20, Գալուստ Պուչազեան 20, Մինաս Յակոբեան 20, Յարութիւն Քէմհաճեան 20, Գեորգ Թիւլպէտե- ճեան 20, Երուանդ Փափաղեան 20 Տօրթ . Վաղարոս Արթին (Ատաֆնա- րոյթ) 20, Կարապետ Պալեան 20, Հայկ Ինայէթեան 20, Եղբարք Յիւտ- ճեան 20, Գեորգ Չարճեան 20, Նը- շան Գայսեթլեան 20, Իւզանդ Ա- լիքսանեան 20, Գեորգ Եալուպ- եան 20, Տիկին Փարիզ Բրուտեան 20, Չարի Գարբուր 20, Մինաս Սարգիսեան 20, Սիլվիաբեան Ալ- նաւուրեան 20,

Գումար 1040

Գումար Առաջին ցանկի 1666 25

Համագումար 2706, 25

ՆԱԽԱԳԻԾ ԿԱՆՈՆԻ

ԵՐԿՐՈՒՂԵՄԻ Ս . ՅԱԿՈՎԲԵԱՆՆՅ ՎԱՆՈՒՅ ՄԻՍԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

(Շար . նախորդ թիւէն)

33. Մատակոտար մարմինը մատակարարութեան գործը կը վա- րէ Ազգ . Ընդհ. Ժողովէն հաստատու- ած տարեկան պիւտճէի սահման- ներով :


34. Մատակարար մարմնի ան- գամներէն կ'ընտրուի աւագ Լուսա- րարապետը և Գարպաւորնկալը :

35. Պիւտճէի կազմութիւնը եւ թակայ է ազգային հաստատութեանց

ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՆ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆՍԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՅՈՒ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աման գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքի ալ և այլ տեսակները բայցի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գտնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անխտանելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրոտօ օրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

պիտոճէներուն ընդհանուր կանաններուն և պայմաններուն .

36. Մատակարար մարմինը իր անդամներու մէջ աշխատութեան բաժանում կատարելով, ամէն մէկը պարտաւոր է իրեն յատկացուած պարտականութիւնը անթերի կատարել .

37. Մատակարար մարմինը կազմող անդամները անհատապէս և հաւաքապէս համարատու և հաշուետու են ուղղակի միաբանական Ընդհ. Ժողովին և Ազգ. Կեդրոնական Վարչութեան Վանօրէից Խորհրդին .

38. Մատակարար մարմինը նիւտերու, որոշումներու վաւերականութիւնը կամ օրինականութիւնը ենթակայ է միաբանական Ընդհ. Ժողովի համար սահմանուած պայմաններուն .

39. Մատակարար մարմինը չէ կարող պիտոճէի սահմաններէն դուրս ու և է ծախս որոշել կամ ընել .

40. Մատակարար մարմինը կը վերանորոգուի երկու տարին անգամ մը և անդամները վերընտրելի են, եթէ ու և է ամբաստանութեան չեն ենթարկուած .

41. Ո՛չ մատակարար մարմինը ո՛չ միաբանութիւնը կամ միաբանական Ընդհ. Ժողովը հաւաքաբար կամ անդամներէն մէկը և ո՛չ Պատրիարքը կամ Տեղակարար չեն կարող երբէք ըստ Ազգ. Սահմանադրութեան նախագծուած օրէնքներու և Ընդհ. Ժողովի հաստատած հրահանգներու, առանց Ազգ. Վարչութեան Տեսակական, Վանական Խորհուրդներու գիտութեան, Կեդր. Բաղադրական Ժողովի հաճութեան, Ազգ. Ընդհ. Ժողովի վաւերացման փոխառութիւն ընել, կառուած կամ այլ սեփականութիւն ծախել, ջնջել, չինել, գնել .

42. Մատակարար մարմինը պարտաւոր է ելևմտից բոլոր գործողութիւնները՝ համաձայն ամենապիտանաւոր հաշուապահական պիտութեան, արձանագրել .

43. Հաշուապահական կոնսուներու պահանջած հաշուետոյցներուն մէջ օրը օրին չարձանագրուած և վաւերացուած չըլլող, անդորրագրերով, հաշուեթուղթերով, ընկալագրերով չ'ապացուցուած ոչ մի եւլումուտք, մանաւանդ ելք՝ վաւերական չէ կարող համարուիլ .

44. Մատակարար մարմինը ոչ

մի որոշում, կարգադրութիւն, հրահանգ գործադրելը վաւերական չեն, եթէ չեն հարգողութիւններու մէջ չեն ցոյց տրուիլ քանի՛ երրորդնասի, ո՛ր թուականին, մեծամասնութեամբ թէ միաձայնութեամբ որոշուած լինելը . եթէ չեն ստորագրուած լինիլ մատակարար մարմինի Դիւանի և նախագահի կողմանէ, եթէ կնքուած չը լինիլ Պատրիարքական կնիքով և չի կրեր ստորագրուած համաձայնութիւնը Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովի ներկայացուցիչին .

45. Չ'ապացուցուած, չ'ստուգուած ելումուտքերու համար մատակարար մարմինը անդամները անհատապէս և հաւաքապէս և պատասխանատու են .

Պաշտօնէտրոյս

46. Թէ՛ միաբանութեան անդամներու ընդհանուր և անհատական պէտքերու և թէ՛ Ս. Յակոբայ վանուց և ուխտատեղեաց անհրաժեշտ տեսնուած բոլոր այն ծառայութեանց, աշխատանքներու համար, որոնց միաբանութեան անդամները չեն կարող հասնիլ, մատակարար մարմինը կողմէ կ'ընտրուին ձեռնհաս, վստահելի պաշտօնեաներ, որոնք միայն ուժեղակուր են և միաբանութեան անդամ չեն համարուիլ .

(Շարունակելի)

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ՍՓԻՆՔՍ

ՀԱՅ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՅԻՍՈՒՆԻ ՉԱՓ ԼՈՒՍԱՏԻՊ ՊՍՏԿԵՐՆԵՐՈՎ ԵՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՆՈՒԹԻԹԻՆՆԵՐՈՎ .

Վաճառման արդիւնքին մէկ կարևոր մասը պիտի յատկանայ բարեգործական հաստատութեան մը . Հաւանօրէն Հ. Բ. Ը. Միութեան, որ Հայկական միակ վստահելի հաստատութիւնն էր .

Տպագրութիւնը պիտի աւարտի մէկ տարիէն .

Կը պատրաստէ Տ. Ե. Թորոսեան մէկ քանի ուրիշներու բարոյական օժանդակութեամբ .

ՄԻՆԿԸՐ


ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՏՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պատիւի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են և ասոնցով մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .

400 և աւելի վիսյակաւ և մեքենաներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ, ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՐՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՅԻՎԱՆԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուղղութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլերի յաճկանշին Գին ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ . Վճարմանց դիւրութիւն Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՒՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Ալ հոգ մի՛ ընէք թէ ձեր կարի մեքենաները Շայնայի մը գիտուն վրայ գրած հոս ու հոն պիտի փոխարէք նորոգելու համար . Պ. Սարգիս Թաշեան՝ իրեն զիմոյ շատ մը յաճախորդներէն քաջալերուած, առինէ մը ի վեր իր պաշտօնը թողլով, յատուկ կտրե պատրաստած է և իր շրջուն ու շարժական խանութը «Վարոն» ին (անոր պղտիկ ձիւն անունն է) բարձր ամէն թողէ կանցնի ամէն օր և ամէն ժամ .

Ձիւնք ճանչնալու դժուարութիւն չկայ, Պղտիկ ձիւն մը քաջալերուած քին վրայ երբ մեքենաներու գործիքներ տեսնէք, որուն շորս կողմը ամեն լիզուով գրուած է, մանաւանդ Réparation des Machines, անմիջապէս կա՛մ «Վարոն» յիշեցէք, և կամ քիչ մը անգին Սարգիս Թաշեանը տեսնել ուղեցէք, իր կապոյտ կտաւէ բոճեային մէջ, անկիայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կը ընէ անմասն յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ .

Չ'մոռնանք նաև կազի վստահաներու և ֆոնօկրաֆներու նորոգութիւնը և նորերու հայթայթումը . Պ. Թաշեան այս գիւրութիւնները ընծայելով, իր նմաններուն ծառայած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունենայ, և քիչ մ'ալ գրամ շահիլ պիտի ուզէ, իր պիտիակներուն դատարարութեանը յատկացնելու համար .

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » ի սպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշիւրները . Ա. ՊԱԼԵՍՆ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ՄԱՏԵՆՈՒՐԱՆԸ Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ « 2 Հիւլէն 50 » Թիւ 3 պրօշիւրը թէև հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուներով զանց կը ընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ ֆրանք . Դիմել Արշալոյսի նմարագրութիւնէն զատ Հեղինակին հասցէին օր է . Mr. A. Balian Le Caire

ՍԸՄՍԱՐ ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կը հաշքայքէ տուեր, դրանական փոխաստորիներ, կահաւորեալ սենեակներ, հայի, խանութի և կաշտածներու փոխանցման գործառնորթիւն . Իր կեդրոնատեղին է Պաղար Մուրուրի գրան քովի երկու օրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն 9ը կէս օրէ յետոյ .